

ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ԴՈՄԻՆՈՆԵՐ

Շախմատային դոմինոների մեկ հավաքածուն պարունակում է 32 խաղաքար 2x1 չափանի, որոնցից յուրաքանչյուրը ներկված է սև կամ սպիտակ գույներով (խաղաքարերի մի մասը կազմված է 2 սպիտակ խորանարդիկներից, մյուս մասը՝ 2 սև, իսկ մեկ այլ մասը՝ մեկ սև և մեկ սպիտակ հատվածներից): Այդպիսի դոմինոյի մեկ հավաքածուն շարված է շախմատի տախտակի վրա: Թույլատրվում է խաղաքարերը պտտել 180 աստիճանով՝ թողնելով յուրաքանչյուր խաղաքար իր տեղում:

Պահանջվում է պարզել, թե հնարավոր է արդյոք պտտել խաղաքարերն այնպես, որ ցանկացած հորիզոնական շարքում գտնվեն նույն գույնի խորանարդիկներ:

Մուտքային տվյալներ

Մուտքում տրված է 8x8 չափանի մատրից: Յուրաքանչյուր թիվ համապատասխանում է խորանարդիկի գույնին, եթե այն դրական է, ապա խորանարդը սպիտակ է, հակառակ դեպքում՝ սև: Խորանարդիկները համարակալված են 1-ից մինչև 32 թվերով:

Ելքային տվյալներ

Ելքում պետք է արտածել մեկ բառ՝ YES կամ NO:

Օրինակներ՝

N	stdin	stdout
1	1 -1 2 2 3 3 4 4 5 5 6 6 7 7 8 8	NO
2	1 2 3 -4 -1 -2 -3 4 5 5 8 8 -7 -7 -6 -6	YES

Պատրաստեց՝ Թամարա Հովհաննիսյանը: